ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№

«____»_____2022թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N483183 գրության՝ ներկայացնում ենք հարցերի պատասխանները:

1.Արդյո՞ք Նախարարությունը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն, թե՞ այն ներառված է քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:

Նախարարությունը տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն չի իրականացնում: Հարցումները մուտք են արվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ՝ քաղաքացիներից ստացված դիմումների հետ:

2. Ու՞մ (ո՞ր պաշտոնյայի, բաժնի կամ վարչության) վրա է դրված վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը) վարելու պարտականությունը:

Քարտուղարության կողմից յուրաքանչյուր ամիս հաշվետվություն է ներկայացվում կառավարությանը՝ քաղաքացիներից ստացված դիմում, բողոքների վերաբերյալ:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը հաշվարկում է ՀԼՄ-ների ներկայացուցիչներից ստացված հարցումները և նախարարության ֆեյսբուքյան էջերով ստացված հարցումները:

3"Ինչպե՞ս (ի՞նչ աղբյուրներից) է ձևավորվում վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը), վիճակագրությունը վարող աշխատողը (բաժինը/վարչությունը) ի՞նչպես է ստանում հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ կամ անհրաժեշտ այլ տեղեկությունները:

Հարցումներն ամփոփելիս հաշվարկվում են թղթային եղանակով, e-request համակարգով և secretariat@mineconomy.am, press@mineconomy.am էլ.փոստերով ստացված գրավոր հարցումները, որոնք մուտք են արվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության MULBERRY համակարգ:

Ամփոփումն իրականացնելիս՝ անհրաժեշտ տեղեկատվությունը քարտուղարության կողմից տրամադրվում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության աշխատակցին: Հաշվարկվում են նաև նախարարության ֆեյսբուքյան էջին եկած գրավոր հարցումները: Ամփոփված տեղեկատվությունը տեղադրվում է նախարարության կայքում:

4"Հրապարակվում է արդյո՞ք վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը): Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել համապատասխան հղումը (ակտիվ):

Էկոնոմիկայի նախարարության կողմից 2021 թվականի ընթացքում ստացված հարցումների վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս ամփոփված չէ: Ամփոփվելուց հետո տեղեկատվությունը կտեղադրվի նախարարության կայքում՝ «Քաղաքացիների ընդունելություն/հարցումներ» հատվածում՝ https://mineconomy.am/page/1487:

5" Ունի՞ արդյոք Նախարարությունը տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ:

Այո:

6" Եթե այո, ապա ո՞վ և ի՞նչ ակտով է նշանակված: Խնդրում եմ տրամադրել այդ ակտի պատճենը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը նախարարի մամուլի քարտուղար Գայանե Անտոնյանն է (իրավական ակտի պատճենը կտրամադրենք հավելյալ):

7" Արդյո՞ք Նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը երբևէ մասնակցել է տեղեկատվության

ազատության վերաբերյալ որևէ դասընթացի կամ վերապատրաստման: Եթե այո, քանի վերապատրաստման և ե՞րբ:

Ոչ, չի մասնակցել:

Հարգանքով՝

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

1/5/2022

X

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Signed by: KHARATYAN ARMINE 7712770107

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Կատարող՝
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Անժելինա Չիլինգարյան
+37411597211